# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պարտականությունները կատարող Վ. Թանգյանի 2024 թվականի օգոստոսի 30-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝***

1. 3000000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 5113 հոդված՝ որից 2700000 ՀՀ դրամ Սիսիան քաղաքի Սիսական 41 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման ծառայությունը ձեռքբերելու համար և 300000 ՀՀ դրամ վերոնշյալ վարչական շենքի նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունը ձեռքբերելու համար:

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պարտականությունները կատարող Վ. Թանգյանի 2024 թվականի օգոստոսի 30-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝***

1. 2000000 ՀՀ դրամ տեղափոխել 06.4.1 ծրագիր 4241 հոդված՝ որից 700000 ՀՀ դրամ Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրի մշակույթի տանը եռաֆազ սնուցման կետ ավելացնելու համար, 1300000 ՀՀ դրամ Սիսիան քաղաքի Սիսական 41 վարչական շենքում եռաֆազ սնուցման կետ ավելացնելու համար:

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պարտականությունները կատարող Վ. Թանգյանի 2024 թվականի օգոստոսի 30-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝***

1. 2000000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 5113 հոդված՝ որից 1800000 ՀՀ դրամ Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի վարչական շենքի տանիքի և թվով 2 սենյակների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման ծառայությունը ձեռքբերելու համար և 200000 ՀՀ դրամ վերոնշյալ վարչական շենքի նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունը ձեռքբերելու համար:

***Հիմք ընդունելով Սիսիանի թիվ 4 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրեն Մ.Պետրոսյանի 2024 թվականի օգոստոսի 6-ի գրությունը առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝***

1. 1929500 ՀՀ դրամ տեղափոխել 09.1.1 ծրագիր 4511 հոդված՝ Սիսիան համայնքի Շենաթաղ բնակավայրում նոր բացվող խմբասենյակի անհրաժեշտ գույք և շինարարական նյութեր ձեռքբերելու համար:

***Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝***

1. 23380372 ՀՀ դրամ տեղափոխել 06.3.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի կարիքների համար Տոլորս բնակավայրի 1-ին և 2-րդ փողոցների և Որոտնավան բնակավայրի 1-ին փողոցի կոյուղագծերի կառուցման աշխատանքներ, տեխնիկական և հեղհանակային հսկողության ծառայությունները ձեռքբերելու համար:

***Ավագանու որոշման նախագծով առաջարկվում է հետևյալ գումարների պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.***

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերանորոգման աշխատանքների նպատակով նախատեսվում է 01.1.1 ծրագիր 5113 հոդվածում արդեն իսկ պլանավորված գումարին ավելացնել 439759 (չորս հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր հիսունինը) ՀՀ դրամ, որն տրամադրվում է «Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն» ՍՊԸ-ի կողմից և պլանավորվում է նաև ֆոնդային բյուջեի / ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ ՄՈՒՏՔԱԳՐՎՈՂ ԱՐՏԱՔԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ՝ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ/ եկամտային մասում:

**Ֆինանսատնտեսական բաժնի պետ** **Դ. Այվազյան**

**03.09.2024թ.**

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 439759 (չորս հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր հիսունինը) ՀՀ դրամով:

**Ֆինանսատնտեսական բաժնի պետ** **Դ. Այվազյան**

**03.09.2024թ.**